Աշխարհաքաղաքական տեղաշարժ Սիրիայում. Թուրքիայի դուրսմղումը միանձնյա խնամակալության ոլորտից

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 25.11.2025 թ.[1]

Սեղմագիր

ԱՌՎԱԿԻ մեկնաբանությունը նվիրված է Սիրիայում աշխարհաքաղաքական փոխդասավորման կտրուկ փոփոխությանը, որը տեղի է ունեցել 2025 թվականի նոյեմբերին Սիրիայի անցումային կառավարության ղեկավար Ահմեդ աշ-Շարաայի («Հայաթ Թահրիր ալ-Շամ» խմբավորման (ՀԹՇ) նախկին առաջնորդ) ԱՄՆ կատարած այցից հետո: Վաշինգտոնի կողմից սիրիական նոր վարչախմբի օրինականացումն Իսրայելի և ԱՄՆ-ի միջնորդությամբ կնքված համաձայնագրի արդյունք է: Գործարքը, որը ձևակերպվել է Սիրիայի տնտեսական անկման և Իսրայելի ռազմական գերազանցության ճնշման ներքո, պարտավորեցնում է Դամասկոսին ընդունել մի շարք պայմաններ՝ հրաժարվել ՀՕՊ-ի արդիականացումից (Իրանի մերձակայքում Իսրայելին ազատ օդային տարածք ապահովելու համար), սահմանափակել ապագա սիրիական բանակի քանակը և ապահովել անվտանգության միջանցքներ դրուզական փոքրամասնության համար: Այդ պայմանավորվածությունների արդյունքում Թուրքիան, որը ՀԹՇ-ի իշխանության գալու գլխավոր հովանավորն էր, ստիպված եղավ առանցքային դիրքեր զիջել ամերիկա-իսրայելական կոնսորցիումի օգտին, որպեսզի խուսափի Սիրիայի Արաբական Հանրապետության (ՍԱՀ) հետագա խառնաշփոթից և իր սահմաններին «Մեծ Քրդստանի» սպառնալիքի իրականացումից: Փոխզիջումն Անկարային թույլ է տալիս պահպանել ազդեցությունն աշ-Շարաայի վարչախմբի վրա և երաշխիքներ ստանալ Սիրիայի դաշնայնացման դեմ, իսկ անձամբ աշ-Շարաային՝ ազատվել թուրքական միանձնյա խնամակալությունից և հնարավորություն ստանալ խուսանավելու ուժային կենտրոնների միջև:

Բանալի բառեր. *Սիրիա, Թուրքիա, ԱՄՆ, Իսրայել, Ահմեդ աշ-Շարաա (ՀԹՇ), աշխարհաքաղաքական հավասարակշռություն, Մերձավոր Արևելք, Աբրահամական համաձայնագրեր, թուրքական արտաքին քաղաքականություն, օդային տարածք, քրդական գործոն, դրուզական փոքրամասնություն:*

11.11.2025 թ. Վաշինգտոնում կայացել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի և Սիրիայի Արաբական Հանրապետության անցումային կառավարության ղեկավար Ահմեդ աշ-Շարաայի հանդիպումը: Սա Սիրիայի առաջնորդի ԱՄՆ կատարած առաջին այցն էր մերձավորարևելյան այդ պետության գոյության ողջ պատմության ընթացքում, ինչը վկայում է երկկողմ հարաբերությունների նոր փուլ նախաձեռնելու կողմերի մտադրության մասին, որոնք պատմականորեն բնութագրվել են կառուցողական փոխգործակցության բացակայությամբ:

Սիրիայի առաջնորդի այցը նշանավորվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից Դամասկոսի նկատմամբ պատժամիջոցների չեղարկմամբ, ինչպես նաև ԱՄՆ-ի կողմից կոնգրեսում նման ընթացակարգ նախաձեռնելու պաշտոնապես հայտարարված մտադրությամբ և Ահմեդ աշ-Շարայի պարտավորությամբ՝ միանալ Իրաքի և Լևանտի իսլամական պետության (ԻԼԻՊ) դեմ պայքար մղող երկրների դաշինքին [1]: Դրանով Վաշինգտոնը փաստացի օրինականացրեց Սիրիայի նոր ղեկավարությանը, որի

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 23.11.2025 թ.:

առաջնորդի գլխի համար ոչ վաղ անցյալում հենց ինքն էր $10 մլն պարգև սահմանել: Սպիտակ տունն այլևս ուշադրություն չի դարձնում Աբու Մուհամմադ Ալ-Ջուլանիի ահաբեկչական անցյալին, բայց ցույց է տալիս Ահմեդ աշ-Շարաայի հետ սերտ համագործակցության ձգտումը, որը դիրքավորվում է որպես «*հեռանկարային քաղաքական գործիչ*», չնայած այն հանգամանքին, որ նա սիրիական ծայրահեղական խմբավորումներից մեկի նախկին առաջնորդն է:

Սակայն «Հայաթ Թահրիր աշ-Շամ»-ի նախկին առաջնորդի վերականգնման Թրամփի նախաձեռնած գործընթացն աղմկահարույց չի ընկալվել: ԱՄՆ-ի և Սիրիայի նախագահների հանդիպումից անմիջապես հետո *The New York Times* պարբերականը, վկայակոչելով անանուն սիրիացի պաշտոնյաներին և արևմտյան դիվանագետներին, հայտնել է, որ Ահմեդ աշ-Շարաան ԻԼԻՊ-ի դեմ ԱՄՆ-ի հետ համագործակցել սկսել է արդեն 2016 թվականից [2]: Ըստ էության, այդ տեղեկատվությունը վավերացրեց փորձագիտական հանրության ենթադրություններն առ այն, որ Սիրիայի ամենաազդեցիկ հակաասադական խմբավորումը, չնայած Վաշինգտոնի կողմից ծայրահեղական էր ճանաչվել, բավականին սերտորեն համագործակցել է ԱՄՆ-ի հետ և, հնարավոր է, նույնիսկ եղել է ՍԱՀ-ի հարցում Վաշինգտոնի քաղաքականության ամենաակտիվ առաջնորդներից մեկը:

ԱՄՆ-ի ղեկավարության կողմից Սիրիայի նոր իշխանությունների օրինականացումը վկայում է, որ Դամասկոսը ստիպված էր ընդունել իսրայելա-սիրիական սահմանին իրավիճակի կայունացման և Սիրիայի ներսում ու շուրջը նոր կարգուկանոնի հաստատման համար ամերիկա-իսրայելական կոնսորցիումի կողմից առաջ քաշված պայմանները, որոնք չեն հակասում Վաշինգտոնի և Թել Ավիվի շահերին: Վաշինգտոնյան խորհրդանշական այցից երկու ամիս առաջ Լոնդոնում ԱՄՆ հատուկ ներկայացուցիչ Թոմ Բարաքի միջնորդությամբ կայացել է Սիրիայի անցումային կառավարության արտաքին գործերի նախարար Ասադ Ալ-Շայբանիի վեցժամյա հանդիպումը Իսրայելի ռազմավարական պլանավորման նախարար Ռոն Դերմերի հետ, որտեղ էլ, ամենայն հավանականությամբ, Դամասկոսին ներկայացվել են այն պայմանները, որոնց կատարումից է կախված սիրիական նոր իշխանության օրինականացման գործընթացը: Եվ չնայած, *Al Arabia* հեռուստաալիքի տեղեկատվության համաձայն, այն ժամանակ բանակցությունները փակուղի էին մտել, աշ-Շարաայի այցն ԱՄՆ վկայում է այն մասին, որ կողմերի միջև սկզբունքային փոխզիջում, այնուամենայնիվ, գտնվել է: Նրանց խորհրդակցությունները, ըստ իսրայելական և սիրիական աղբյուրների, կշարունակվեն, և այնուամենայնիվ, պետք է ենթադրել, որ հիմնական խոչընդոտներն արդեն վերացվել են:

Հատկանշական է, որ ամերիկացիներն ու իսրայելցիներն, ամենայն հավանականությամբ, ի թիվս այլ պայմանների, Դամասկոսին նաև առաջարկել են միանալ, այսպես կոչված, «*Աբրահամի համաձայնագրերի*» նախաձեռնությանը, ինչի մասին անուղղակիորեն վկայում է Սիրիայի համար նման քայլի վաղաժամ լինելու մասին

Ահմեդ աշ-Շարաայի հայտարարությունը [3]: Միևնույն ժամանակ, նա չի բացառել ապագայում նման հնարավորությունը՝ ակնհայտորեն ակնարկելով, որ ՍԱՀ-ը դեռևս պատրաստ չէ բոլոր պայմանների անվերապահ կատարմանը և պահպանում է խուսավարման դաշտը Վաշինգտոնի և Թել Ավիվի հետ հարաբերություններում:

Ահմեդ աշ Շարաայի թիմի շահերից է բխում սիրիական հասարակությանը, ինչպես նաև տարածաշրջանային դաշնակիցներին և գործընկերներին ցույց տալ, որ Դամասկոսը հետևողականորեն պաշտպանում է իր շահերը և ամերիկա-իսրայելական երկյակի հետ հավասար երկխոսություն է վարում ինչպես Սիրիայի ապագա կառուցվածքի, այնպես էլ տարածաշրջանային օրակարգի հարցերի շուրջ: Այնուամենայնիվ, Սիրիայի ընդհանուր քաղաքական իրավիճակի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Դամասկոսը հարկադրաբար ինտեգրվում է ամերիկա-իսրայելական կոնսորցիումի ազդեցության ոլորտին և գործողությունների մղվում Վաշինգտոնի և Թել Ավիվի շահերի ուղղությամբ: Այսպես, ՑԱԽԱԼ-ն զգալի տարածքներ է գրավել դեռևս 1974 թվականին հրեական պետության և ՍԱՀ-ի միջև հաստատված բուֆերային գոտու երկայնքով, վերահսկողության տակ վերցրել ռազմավարական նշանակություն ունեցող Հերմոն լեռը և փաստացի տեղակայված է Դամասկոսի անմիջական հարևանությամբ: Սիրիայում իշխանափոխության գրեթե առաջին օրվանից Իսրայելի ռազմաօդային ուժերը և հրթիռահրետանային ստորաբաժանումները պարբերաբար ոչնչացրել են խոշոր ռազմակայաններ և սպառազինության պահեստներ, որոնք նախկինում վերահսկվում էին Ասադի կառավարական բանակի կողմից [4]: Արդեն 09.12.2024 թ. ամբողջական ոչնչացման է ենթարկվել սիրիական ռազմածովային նավատորմը՝ նավերի, ռազմակայանների և զինամթերքի պահեստարանների հետ միասին [5]: Սիրիայի օդային տարածքը գրեթե ամբողջությամբ գտնվում է իսրայելական օդուժի և ՀՕՊ համակարգերի վերահսկողության տակ, ինչը բացառում է իսրայելական օդուժի զսպման նույնիսկ նվազագույն միջոցների և պայմանների կազմակերպման հնարավորությունը: Սիրիայում ՀՕՊ համակարգերը վերազինելու և իր ինքնաթիռները տեղակայելու Թուրքիայի մի քանի փորձերը ձախողվեցին, քանի որ իսրայելական կործանիչները բացահայտորեն շարքից հանում էին իրենց ռազմաօդային ուժերի և հակաօդային ուժերի տեղակայման համար թուրքերի ընտրած կայաններն ու ենթակառուցվածքները [6]:

Սիրիական նոր բանակի մարտունակությունը, որը կազմավորվել է առավելապես մասնատված ծայրահեղական խմբավորումներից (ՀԹՇ և ՍԺԲ), զգալիորեն անկում է ապրել: Դա ուղղակիորեն անդրադառնում է երկրի բարդ ներքաղաքական իրավիճակի և Դամասկոսում անցումային կառավարության՝ հանրապետության կենտրոնախույս ուժերին իր ենթակայության տակ պահելու նրա ունակության վրա: Քրդերը շարունակում են վերահսկել երկրի հյուսիսում, հյուսիս-արևելքում և արևելքում գտնվող հսկայական նահանգները, որոնք միասին կազմում են Սիրիայի տարածքի մոտ 30%-ը: Սիրիայի

հյուսիս-արևմտյան ափամերձ շրջաններում, որոնք առավելապես բնակեցված են ալավիներով և ասադամետ այլ էթնո-կրոնական խմբավորումներով, իրավիճակը շարունակում է պայթյունավտանգ մնալ:

Ընթացիկ տարվա հուլիսին իրադրությունը ծայրահեղ սրվել է Սիրիայի հարավում և, մասնավորապես, Էս-Սուվեյդա նահանգում, որտեղ բեդվին արաբների հետ արյունալի բախումներից հետո դրուզները փաստացի ապստամբություն են բարձրացրել Դամասկոսի կենտրոնական իշխանության դեմ և հայտարարել նրան չենթարկվելու մասին: Բողոքի ցույցերն ուժով ճնշելու Դամասկոսի փորձերը հանգեցրին Իսրայելի բացահայտ միջամտությանը և Դամասկոսի ռմբակոծմանը, այդ թվում՝ Ահմեդ աշ-Շարաայի մայրաքաղաքային նստավայրի վրա հարվածներին [7]: Ավելի վաղ՝ մարտին, դրուզական ջոկատներն արդեն կառավարական ուժերի հետ մարտերի մեջ էին մտնում Դամասկոսի հարավային արվարձանում՝ Ջարամանա քաղաքում, որից հետո Իսրայելը անցումային սիրիական կառավարությանը կրկին պահանջ էր ներկայացրել դադարեցնել կրակը և շտապ պատրաստել էր իր բանակը Սիրիային հարվածելու համար [8]:

Մյուս կողմից, ՍԱՀ-ը շարունակում է ծանրագույն սոցիալ-տնտեսական ճգնաժամ ապրել: Սիրիան 2011 թվականից փաստորեն գտնվում է քաղաքացիական պատերազմի վիճակում, որը խաթարել է մերձավորարևելյան չափանիշներով երբեմնի բավական բարեկեցիկ ապրող այդ երկրի բնականոն կենսագործունեությունը: Նրա միլիոնավոր քաղաքացիներ հայտնվել են փախստականի կարգավիճակում, բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր ավերվել են, ենթակառուցվածքները՝ ոչնչացվել, բնակչությունը տառապում է ջրի և սննդի պակասից, պահպանվում են գնաճի բարձր ցուցանիշները, իսկ արդյունաբերությունը կաթվածահար է էլեկտրաէներգիայի և գազի պակասի, ինչպես նաև սպառման նախկին շուկաների կորստյան պատճառով: Սիրիայի կրիտիկական վիճակը կարող էր զգալիորեն բարելավել նավթի արդյունահանումը և նավթի արտահանումը, սակայն սիրիական հանքավայրերի հիմնական մասը գտնվում է քրդական ուժերի կողմից վերահսկվող տարածքներում, իսկ այնտեղ արդյունահանված հումքն ամերիկացիները տարհանում են [9], ենթադրաբար Իրաքի տարածքով: Ըստ Ռազմավարական հետազոտությունների ռուսաստանյան ինստիտուտի փորձագետների, Սիրիայում քաղաքացիական պատերազմի հենց սկզբից ԱՄՆ-ը վերահսկողություն է հաստատել Սիրիայի նավթային շրջանների նկատմամբ և Ասադի «*ավտորիտար ռեժիմի*» և ԻԼԻՊ-ի դեմ պայքարի պատրվակով արաբական հանրապետության հումքային պաշարների չարտոնված առգրավում իրականացրել [10]: Սակայն Ասադի իշխանության տապալումից հետո էլ իրավիճակը նկատելիորեն չի փոխվել: 2025 թվականի հունիսին ամերիկացիների կողմից ՍԱՀ-ի դեմ պատժամիջոցների վերացումը և քրդական Ռոժավայի հետ Ահմեդ աշ-Շարաայի երկխոսության հաստատումը նպաստեցին նրան, որ մերձեփրատյան հորատանցքերից արդյունահանվող նավթի որոշակի ծավալ, այնուամենայնիվ, գնաց

վաճառքի՝ հօգուտ Դամասկոսի պետական գանձարանի [11]: Սակայն, ըստ որոշ տեղեկությունների, Սիրիայի անցումային կառավարության և քրդական Սիրիայի ժողովրդավարական ուժերի (ՍԺՈՒ) միջև ընթացող խաղաղ գործընթացը չի նպաստում դեպի սիրիական միջերկրածովյան Տարտուս նավահանգիստ քրդական նավթի կայուն մատակարարմանը: Միանգամայն ընդունելի է, որ ԱՄՆ-ն երկակի խաղ է վարում սիրիական նավթային արտահանման ոլորտում. մի կողմից՝ Դամասկոսին այդ հումքի վաճառքից գումար ստանալու իր շահագրգռվածության պատրանք ստեղծելով, իսկ մյուս կողմից՝ Ռոժավային խրախուսելով խափանել «*նավթային պայմանավորվածությունները*»:

Այսպես թե այնպես, Դամասկոսի անցումային կառավարությունը դեռևս ի վիճակի չէ շտկել ճգնաժամային իրավիճակը տնտեսության և ֆինանսական հարցերում, ինչն էլ իր հերթին խորացնում է Ահմեդ աշ-Շարաայի վիճակը և խաթարում նրա քաղաքական կենսունակությունը: Թուրքիան, որը, ընդհանուր առմամբ, հանդես է եկել որպես Դամասկոսում ՀԹՇ վերնախավի իշխանության գալու առանցքային հովանավոր, ի վիճակի չեղավ ապահովելու սիրիական բանակի մարտունակության բարձրացումը և Սիրիայի սոցիալ-տնտեսական իրավիճակի կայունացումը: Սիրիայի ամբողջականության պահպանումն ավելի բարդ խնդիր էր, քան, ըստ երևույթին, պատկերացնում էր Ռեջեփ Թայիփ Էրդողանը, ով Սիրիայի նախկին իշխանությունների տապալումից հետո հայտարարեց, թե «*Սիրիայի պատմության մութ շրջանն արդեն ավարտվել է*» [12]: Իրավիճակի ինտրիգն այն է, որ Ահմեդ Ալ-Շարաան և նրա շրջապատը հայտնվել են նույն Բաշար Ասադի վիճակում, որը, Իրանի և ՌԴ-ի վրա հենվելով, 14 տարի շարունակ անհաջող կերպով փորձել է կանխել իր երկրի վերջնական փլուզումը: Տարբերությունն այն է, որ աշ-Շարաան մինչ վերջերս ձգտում էր ապահովել Սիրիայի համախմբումը՝ հենվելով Անկարայի աջակցության վրա: «*Սիրիական մեծ խաղի*» մասնակիցները միայն դերերով են փոխվել, մինչդեռ ներսիրիական օրակարգը չի փոխվել, իսկ Սիրիայի ապագայի հարցը նախկինի պես բաց է մնում:

Այս իրավիճակում Սիրիայի անցումային կառավարությանն այլ ելք չէր մնում, քան գնալ ԱՄՆ-ի և Իսրայելի առաջադրած պահանջների կատարմանը: Իսկ Անկարան ստիպված էր հաշտվել այն բանի հետ, որ ինքը չի կարող հետասադական Սիրիայի վերափոխման միանձնյա շահառուն համարվել: Անկարայում արձանագրել են, որ Դամասկոսի վրա կազմակերպված և իր կողմից համակողմանիորեն աջակցվող հաջողված բլիցկրիգը Թուրքիային չի ապահովել սիրիական նոր ղեկավարության նկատմամբ խնամակալություն իրականացնելու բացառիկ իրավունքը: Անկարան համոզվել է, որ Դամասկոսը Վաշինգտոնից և Թել Ավիվից հեռու պահելու հետագա փորձերը կարող են նոր քաղաքական ճգնաժամ և քաղաքացիական պատերազմի սրացում հրահրել, ինչն անխուսափելիորեն անվտանգության անկման կհանգեցնի Թուրքիայի հարավային սահմաններին:

Հատկանշական է, որ Դ. Թրամփի և Ա. աշ-Շարաայի հանդիպումից հետո Թուրքիայում ԱՄՆ դեսպան և ԱՄՆ նախագահի սիրիա-իսրայելական կարգավորման

հարցերով հատուկ ներկայացուցիչ Թոմ Բարաքն իր հայտարարության մեջ Դամասկոսի նախկին պահվածքը որակել է որպես «*օտարացում*»: Այդ եզրույթով նա սահմանել է Սիրիայի նոր իշխանությունների դիրքորոշումը, որոնք Անկարայի ճնշման ներքո երկար ժամանակ չէին համարձակվում սերտ կապի մեջ մտնել Իսրայելի և ԱՄՆ-ի հետ և հաշվի առնել նրանց շահերը Սիրիայում: Այժմ, ինչպես հայտարարել է Բարաքը, եկել է «*Մերձավոր Արևելքի նորագույն պատմության շրջադարձային պահը*»: Իր հերթին, վաշինգտոնյան հանդիպմանը ներկա Թուրքիայի ԱԳՆ ղեկավար Հաքան Ֆիդանը, հետագայում մեկնաբանելով Թրամփի և աշ-Շարաայի միջև բանակցությունների արդյունքները, բազմիցս շեշտը դրել է այն բանի վրա, որ ԱՄՆ-ն իր սիրիական քեյսում պետք է հաշվի առնի Թուրքիայի շահերը և ակնարկել է, թե Անկարայի խնդրանքներն անտեսելու պարագայում բանակցային գործընթացն անհեռանկար է [13]: Թուրքիայի համար չափազանց կարևոր է ցույց տալ, որ եթե սիրիական գործերում նա նույնիսկ գլխավոր արտաքին դերակատար չի մնում, ապա առնվազն հավակնում է ԱՄՆ-ի հետ հավասար մասնակցություն ունենալ սիրիական օրակարգին: Իսկ Վաշինգտոնը, տոնելով իր հաջողությունը, հմտորեն խաղում է այդ պատումների հետ՝ նույն Թ. Բարաքի խոսքերով արձանագրելով, թե Թուրքիան արժանի է ճանաչման «*իր զուսպ և վճռական դիվանագիտության համար, որը կամուրջներ է կառուցում այնտեղ, որտեղ նախկինում արգելապատներ էին*»:

Հարկ է ենթադրել, որ Թուրքիան, հավանաբար, շատ բացասական է գնահատում Սիրիայում իր առավելապաշտական ռազմավարական նպատակների արժեզրկումը: Ինչպես կարելի է դատել սիրիական բանակցային օրակարգի վերաբերյալ տարաբնույթ տեղեկություններից, ամերիկա-իսրայելական երկյակը պնդում է, որ Սիրիայի օդային տարածքը երաշխավորված բաց մնա իսրայելական օդուժի համար, ինչն իր հերթին ենթադրում է Անկարայի հրաժարումը սիրիական ՀՕՊ համակարգի արդիականացման և այդ երկրում իր ռազմաօդային կայանների տեղակայման ծրագրերից: Դրանով իսկ Վաշինգտոնն ու Թել Ավիվն ձգտում են ամբողջությամբ ամրապնդել սիրիական օդային տարածքն Իրանի տարածքին մերձենալու լավարկված պայմանների համար՝ Իսլամական Հանրապետության ռմբակոծությունների վերսկսման դեպքում:

Այս պահանջի մեկ այլ շարժառիթ պետք է համարել Թել Ավիվի մտավախություններն Իսրայելի սահմանի անմիջական հարևանությամբ թուրքական ռազմաօդային կայանների տեղակայման հնարավորության վերաբերյալ, ինչն անվտանգության համար հնարավոր ռիսկեր է պարունակում: Հայտնի է նաև, որ Իսրայելը Դամասկոսի ժամանակավոր կառավարությունից միջանցք է պահանջել դրուզներով հոծ բնակեցված Էս-Սուվեյդայի ուղղությամբ՝ դա հիմնավորելով երաշխիքներ ստանալու անհրաժեշտությամբ, որ Սիրիական բանակը զգուշանալու է այդ դավանաբանական փոքրամասնության դեմ նոր հարձակումից: Կարելի է նաև ենթադրել, որ ամերիկացիներն ու իսրայելցիները պահանջներ են ներկայացրել Սիրիայի ապագա զինված ուժերի թվաքանակի և

սպառազինության սահմանափակման վերաբերյալ՝ դրանով իսկ խափանելով 300-հազարանոց բանակ ստեղծելու վերաբերյալ Անկարայի ծրագրերը, բանակ, որը հագեցած կլիներ է ժամանակակից սպառազինությամբ և գործնականում ենթակա կլիներ թուրքական ռազմական հրամանատարությանը:

Այս և մի շարք այլ ենթադրյալ պահանջների կատարումը Անկարային կզրկի Սիրիայում իր անվիճելի գերիշխանությունը հաստատելու, արաբական աշխարհում իր դիրքերն ամրապնդելու և Իսրայելի սահմանների անմիջական հարևանությամբ իր ռազմական ներկայությունն ուրվագծելու հնարավորությունից:

Անկարան ստիպված է համակերպվել այս իրողության հետ, քանի որ Սիրիայում Իսրայելի հետ փորձնական քաղաքական-դիվանագիտական փոխգործակցությունը, ինչպես նաև ռազմական բնույթի մի շարք իրադարձություններ ցույց տվեցին, որ Թուրքիան բավարար պաշարներ չունի Սիրիայում ժամանակավոր կառավարության դիրքերն ամրապնդելու և նրան միանձնյա խնամակալության տակ պահելու համար: Իր մոտեցումներն արմատականացնելու և անզիջում դարձնելու արդյունքում Անկարան փաստորեն ստացավ իր կողմից հովանավորվող «*Նոր սիրիական բանակի*» պարտությունը քրդերից Մանբիջում և Մերձեփրատում (Տիշրին ամբարտակ), նախադրյալներ ստեղծեց Սիրիայում «*դրուզական անջատողական շարժման*» ձևավորման համար և ստիպված եղավ բոլոր հասանելի մեթոդներով փրկել Ահմեդ աշ-Շարայի միջազգային վարկանիշը 2025 թվականի մարտին ալավիների զանգվածային կոտորածից հետո [14]: Իսկ սիրիական ուղու վրա թուրքական առավելապաշտության գլխավոր բացասական հետևանքը դարձավ «*Մեծ Քրդստանի*» օրակարգի վերակենդանացումը, որը սկսեցին ակտիվորեն առաջ տանել ԱՄՆ-ը և Իսրայելը՝ դրանով իսկ «*թուրքական արկածախնդրություններին*» պատասխանելով Թուրքիայի հարավային սահմանների ապակայունացմամբ և նրա ինքնիշխանությանն ուղղված անմիջական սպառնալիքով [15]: Արդյունքում Անկարան պրագմատիզմով ընդունեց այդ բոլոր ազդակները և համակերպվեց այն մտքի հետ, որ ստիպված կլինի Սիրիայում ճնշում գործադրել ԱՄՆ-ի և Իսրայելի օգտին, որպեսզի այդ երկրում ազդեցության վերջնական կորուստ և խառնաշփոթ թույլ չտա, ինչն անխուսափելիորեն կհանգեցնի հենց Թուրքիայի անվտանգության հիմնարար ապակայունացմանը: Իսկ այդ սպառնալիքները կասեցնելու համար ֆինանսատնտեսական և ներքաղաքական սուր ճգնաժամեր ապրող Անկարան բավարար պաշարներ չունի:

Որքանով որ կարելի է դատել բաց աղբյուրներից ստացված ոչ ամբողջական տեղեկատվությունից, Սիրիայի վերաբերյալ ԱՄՆ-ի և Իսրայելի առաջ քաշած պահանջների փոխարեն Թուրքիան կստանա Վաշինգտոնի և Թել Ավիվի բարեհաճությունը Դամասկոսում իշխող վարչախմբի նկատմամբ, նրանց համաձայնությունը՝ պահպանելու Սիրիայի ձևական ամբողջականությունը և հրաժարվելու նրա դաշնայնացման ծրագրից, ինչպես նաև չարդիականացնելու քրդական անկախության հարցերը: Բացի այդ, խոսքը կարող է վերաբերել նաև ամերիկա-իսրայելական երկյակի պարտավորություններին՝ Սիրիայի

վերականգնման գործընթացում Պարսից ծոցի արաբական հարուստ միապետություններին առավել ակտիվ ներգրավելու ուղղությամբ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ սիրիական ուղու վրա հիմնարար հակասությունների շուրջ փոխզիջումն արդեն ձեռք է բերվել, և Անկարայի հետ մեկ տարի սերտ փոխգործակցությունից հետո Դամասկոսը հաշվի կառնի ամերիկա-իսրայելական երկյակի շահերը: Ի տարբերություն Ռ. Էրդողանի, Ահմեդ աշ-Շարաայի համար սա միանգամայն ընդունելի սցենար է, քանի որ այն հնարավորություն է տալիս ազատվել Անկարայի անհարկի խնամակալությունից և տապալման սպառնալիքից պաշտպանել իր անձնական իշխանությունը: Մինչև վերջերս աշ-Շարաայի անցումային կառավարությունը, այլ ընտրություն չունենալու պատճառով, ստիպված էր շարժվել թուրքական քաղաքականության հունով և հենվել բացառապես Անկարայի վրա, մինչդեռ ներկայիս փոխդասավորությունը նրան հնարավորություն կտա խուսանավել մի քանի ուժային կենտրոնների միջև և հաստատել հավասարակշռություն, որն անհրաժեշտ է իր դիրքերն ամրապնդելու համար: Անձնական առումով՝ նոր իրողություններին հարմարվելը և նոր գործընկերների հետ «ընկերություն» անելը հոգեբանական կամ մտավոր դժվարություններ չեն ստեղծում նրա համար: Ահմեդ աշ-Շարաան, ըստ աղբյուրների, ամերիկացիների հետ աշխատելու փորձ ունի 2016 թվականից, և, ամենայն հավանականությամբ, այդ փոխգործակցությունն արդեն այն ժամանակ ավելի խորը բնույթ էր կրում, քան այժմ ընդունված է համարել և լուսաբանել ՁԼՄ-ներում:

Վաշինգտոնում Ահմեդ աշ-Շարաայի հրապարակային և շքեղ ընդունելությունը, անշուշտ, ցուցիչ է այն բանի, որ Սիրիայի հարցում հիմքային փոխզիջում է գտնվել, գլխավոր պայմանները համաձայնեցված են, և բանը մնացել է տեխնիկական դետալներին և մանր լրամշակումներին: Այլ հարց է՝ որքանո՞վ են բոլոր այդ բարձր պայմանավորվածությունները «*գետնի վրա*» կյանքի կոչելու հաջողության հավանականությյունը և, արդյոք, բոլոր շահագրգիռ կողմերը հավատարի՞մ կմնան իրենց ստանձնած պարտավորություններին: Սիրիական հանգույցը չափազանց բարդ է, և դրանում չափազանց շատ հետաքրքրություններ և հակասություններ են հյուսվում, որպեսզի այն արագ և պարզ լուծվի: Միանշանակ մի բան կարելի է ասել. Ասադների ընտանիքի, ապա նաև Ահմեդ աշ-Շարաայի փորձը ցույց է տալիս, որ այս երկրում իշխանությունը զավթելն անհամեմատ ավելի հեշտ է, քան այն պահելը և լիարժեք իրացնելը:

Հղումներ

[1] «После встречи Трампа с аш-Шараа Сирия объявила, что присоединяется к коалиции по борьбе с «Исламским государством». BBC NEWS, 11.11.2025, https://www.bbc.com/russian/articles/c051ym8r96yo (բեռնման օրը՝ 17.11.2025).

[2] «NYT: президент Сирии аш-Шараа с 2016 года работает с США против запрещенной ИГ».

Kommersant, 12.11.2025, https://www.kommersant.ru/doc/8196192 (բեռնման օրը՝ 17.11.2025).

[3] «Аш-Шараа: Сирия пока не собирается обсуждать нормализацию отношений с Израилем». News.am, 11.11.2025, https://news.am/rus/news/914564.html#google_vignette (բեռնման օրը՝ 17.11.2025).

[4] «Израиль заявил, что уничтожил «большую часть стратегических запасов» оружия в Сирии». BBC NEWS, 10.12.2024, https://www.bbc.com/russian/articles/ckg1nrjy89go (բեռնման օրը՝ 17.11.2025).

[5] «Израиль заявил об уничтожении флота Сирии». РБК, 10.12.2024, https://www.rbc.ru/politics/10/12/2024/6758468c9a7947a51e1321e7 (բեռնման օրը՝ 17.11.2025).

[6] «Израиль ударил по Сирии после сообщений об интересе Турции к авиабазе под Пальмирой. Это израильское предупреждение Анкаре?» BBC NEWS, 03.04.2025, https://www.bbc.com/russian/articles/cwyn1ke8987o (բեռնման օրը՝ 17.11.2024).

[7] «Израиль ударил по району президентского дворца в Дамаске». РБК, 16.07.2025, https://www.rbc.ru/politics/16/07/2025/6877aac99a794775efdfa0ad (բեռնման օրը՝ 17.11.2025).

[8] «Спецоперация по-израильски: в Сирии друзы подняли открытое восстание». EADaily, 02.03.2025, https://eadaily.com/ru/news/2025/03/02/specoperaciya-po-izrailski-v-sirii-druzy-podnyali-otkrytoe-vosstanie (բեռնման օրը՝ 17.11.2025).

[9] «Лавров: США не занимаются антитеррором в Сирии, они вывозят нефть». ТАСС, 31.08.2024, https://tass.ru/politika/21734257 (բեռնման օրը՝ 18.11.2025).

[10] М. Ходаренок «Слишком черное золото: как США грабят Сирию». РИСИ, https://riss.ru/news/smi/slishkom-chernoye-zoloto-kak-ssha-grabyat-siriyu/ (բեռնման օրը՝ 18.11.2025).

[11] «Сирия впервые за 14 лет экспортировала нефть». Armenpress, 02.09.2025, https://armenpress.am/ru/article/1228601 (բեռնման օրը՝ 17.11.2025).

[12] «Эрдоган выступил за целостность Сирии». ТАСС, 09.02.2025, https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/22622563 (բեռնման օրը՝ 17.11.2025).

[13] «Фидан: сотрудничество Турции и США по Сирии имеет большое значение». ТАСС, 12.11.2025, https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/25608693 (բեռնման օրը՝ 18.11.2025).

[14] «Чем закончатся массовые расправы над алавитами в Сирии?» Новая газета Европа, 10.03.2025, https://novayagazeta.eu/articles/2025/03/10/mirno-ne-poluchilos (բեռնման օրը՝ 19.11.2025).

[15] «США и Израиль приступили к осуществлению проекта «Большой Курдистан». Аналитический центр АРВАК, 28.08.2025, https://arvak.am/ru/сша-и-израиль-приступили-к-осуществле/ (բեռնման օրը՝ 19.11.2025).